

1131



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 04 » 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 020 - 25

Նախաձեռնող՝ «ԱՌՄԱ ՍԹՈՒՆ» ՍՊԸ
Ք.Երևան, Հանրապետության նրբանցք, S/17

Գործունեությունը՝ Մայակովսկու բազալտների հանքերակման «Հյուսիսային»
տեղամասի տարածքում 2024-2026թթ. կատարվելիք
երկրաբանական ուսումնասիրություն
Կոտայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 020 - 25

«04» փետրվարի 2025թ.

Կոտայքի մարզի Արովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի «Հյուսիսային» տեղամասի 2024-2026թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՌՄԱ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Արովյան համայնք, Մայակովսկի բնակավայր

«ԱՌՄԱ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ ընկերությունը նախատեսում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ Մայակովսկու բազալտների հանքերևակման «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ» տեղամասում՝ նպատակ ունենալով որոշել օգտակար հանածոյի հզորությունը, որակական հատկությունները և պարզել դրանց պիտանելիությունը երեսպատման և շինարարական քարի արտադրության համար :

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Մայակովսկու բազալտների հանքերևակման «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ» տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Կոտայքի մարզի Արովյան խոշորացված համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական տարածքում՝ Մայակովսկի գյուղից 1.8 կմ հարավ-արևմուտք ուղղությամբ: Տեղամասը հողաձածկ ճանապարհով կապված է Արամուս-Ձորաղբյուր ավտոճանապարհի 1480.0 մ բացառակ



նիշով գագաթի մերձակայքում և զբաղեցնում է մոտ 4.9 հա մակերեսով տարածք: Տեղամասը ասֆալտապատ ավտոճանապարհներով կապված է Արամուս (4.0կմ), Ձորաղբյուր (2,5 կմ) գյուղերի, Աբովյան (5.0 կմ) և Երևան (27 կմ) քաղաքների հետ: Հայկական երկաթուղու Աբովյան կայարանը գտնվում է տեղամասից մոտ 6.0 կմ հեռավորության վրա:

Ընդհանուր առմամբ տարածաշրջանի բազալտի հանքավայրերի շահագործման արդյունքում (Մայակովսկի-Բալահովիտ-Գետարգել գյուղերի հատված) ձևավորվել է տեխնածին, ընդերքօգտագործման աշխատանքներով խախտված, արտադրական հրապարակներով, լցակույտերով և ներհանքային ճանապարհներով զբաղեցված լանդշաֆտ: Տեղամասի տարածքում նախկինում կատարվել են ոչ մեծ ծավալի արդյունահանման աշխատանքներ (տեղական բնակչության կողմից), սակայն հետախուզական փորվածքներ չեն անցվել, ձևավորված լցակույտերը կամ պահեստավորված հողաբուսաշերտը բացակայում է:

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել հորատանցքերի և բացահանքի միջոցով, նմուշարկման զուգորդությամբ:

Նախատեսվում է կատարել փորձնական արդյունահանում բազալտներից՝ երեսպատման բլոկների և սալերի ելքի տոկոսը պարզելու համար:

Հանքերևակման բազալտների որակական հատկանիշները պարզելու համար նախատեսվում է հորատանցքերից, փորձնական բացահանքից, կատարել նմուշարկում: Նախատեսվում է համախառն նմուշի վերցնում: Այդ նմուշները կենթարկվեն քիմիական և ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների: Քիմիական անալիզի համար նախատեսվում է վերցնել 3 նմուշ: Նախատեսվում է կատարել նաև պետրոգրաֆիական հետազոտություններ, որի համար պետք է պատրաստվի 3 շիֆ:

Բացի վերը նշված աշխատանքներից, տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ, իսկ ճառագայթահիզմանիկ իրավիճակը պարզաբանելու համար՝ ռադիոակտիվ դիտարկումներ:

Նախատեսվում է աշխատանքների արդյունքներով կազմել երկրաբանական հաշվետվություն՝ արդյունաբերական B+C1 կարգերով պաշարների հաշվարկմամբ և տեխնիկատնտեսական հիմնավորմամբ:

Երկրաբանական աշխատանքների կատարման հիմնական մեթոդներն են.
-երկրաբանական աշխատանքների իրականացում՝ հորատանցքերի, փորձնական բացահանքի և նմուշարկման միջոցով,
-տեղամասում 1:1000 մասշտաբի տոպոհանույթի իրականացում, որի հիման վրա կկազմվի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզ, պաշարների հաշվարկման եզրագծով,



-բազալտների ֆիզիկամեխանիկական, քիմիական և պետրոգրաֆիական հատկանիշների ուսումնասիրություններ,

-հիդրոինժեներակրաբանական և ռադիոմետրիական ուսումնասիրություններ,

-բազալտների հաշվեկշռային պաշարների հաշվում,

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 8 հորատանցք՝ 136 մ ընդհանուր ծավալով՝ երեք հետախուզական գծերի վրա և ըստ անհրաժեշտության 1 հորատանցք՝ երկրաբանական կառուցվածքային առանձնահատկությունները պարզելու համար: Հորատանցքերի խորությունը նախատեսվում է մինչև 17 մ, քանի որ ըստ հարակից հանքավայրերի օրինակների պարզ է դառնում, որ բազալտների օգտակար հաստվածքը չի գերազանցում 14-14.5 մ-ը: Հորատումը կատարվելու է ՈՒԿԲ-1-VS հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով, 132 մմ սկզբնական տրամագծով և 76 մմ վերջնական տրամագծով: Օգտակար հանածոյի հորատահանուկի ելքը պետք է կազմի 85%:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները՝ հորատանցքերը և փորձնական բացահանքը: Նախատեսվում է իրականացնել հետախուզական փորվածքների տեղադիրքի կապակցում, մակերևույթի թեքության անկյան և ազիմուտի չափում:

Հորատումից ստացված ամբողջ հորատահանուկը ենթարկվելու է նմուշարկման: Նմուշարկումը սեկցիոն է, հորատահանուկի միջին տրամագիծը 76 մմ է: Կնմուշարկվեն հորատման ամբողջ ծավալի 85%-ը արմատական ապարներում: Հորատման ամբողջ ծավալը 5 մ նմուշի միջին երկարության դեպքում կկազմի՝ $136 \times 85\% = 116$ գծ.մ նմուշ, 116 գծ.մ-ից կվերցվի 24 նմուշ: Կառուցվածքային նպատակով հորատված հորատանցքը նմուշարկման ենթակա չէ:

Հետախուզվող տարածքում ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել՝

- հանքավայրի ապարների կազմը,
- ապարների ճեղքավորվածությունը,
- ապարների կառուցվածքային առանձնահատկությունները,
- անիզոտրոպիան,
- տեղանքի գեոդինամիկ պրոցեսները:

Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել.

- հանքային հորիզոնները ջրաբեր դարձնող հիմնական ջրատար հորիզոնները,
- ջրի որակը,



- կատարել ռեժիմային դիտարկումներ:

Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ:

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքը զբաղեցնում է 4.9 հա մակերես և սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS – 84 համակարգով):

1. Y=8468327.45	X=4454690.97	17. Y=8468438.70	X=4454330.52
2. Y=8468285.82	X=4454705.81	18. Y=8468445.53	X=4454336.48
3. Y=8468278.00	X=4454492.24	19. Y=8468447.34	X=4454339.54
4. Y=8468278.93	X=4454486.01	20. Y=8468448.12	X=4454341.64
5. Y=8468292.74	X=4454479.52	21. Y=8468448.12	X=4454343.66
6. Y=8468313.64	X=4454349.40	22. Y=8468437.36	X=4454380.35
7. Y=8468313.05	X=4454342.55	23. Y=8468438.25	X=4454382.85
8. Y=8468303.92	X=4454314.19	24. Y=8468443.41	X=4454388.92
9. Y=8468318.23	X=4454294.55	25. Y=8468448.79	X=4454393.86
10. Y=8468328.41	X=4454281.46	26. Y=8468470.92	X=4454409.65
11. Y=8468330.59	X=4454279.58	27. Y=8468485.38	X=4454417.97
12. Y=8468331.54	X=4454279.24	28. Y=8468504.11	X=4454465.13
13. Y=8468335.21	X=4454279.67	29. Y=8468396.32	X=4454467.19
14. Y=8468341.17	X=4454279.08	30. Y=8468386.15	X=4454466.90
15. Y=8468343.91	X=4454279.76	31. Y=8468378.12	X=4454626.08
16. Y=8468348.04	X=4454281.34	32. Y=8468388.14	X=4454710.48

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման անմիջապես ավարտից հետո նախատեսվում է իրականացնել ռեկուլտիվացիոն աշխատանքները՝ հորատահարթակների և փորձնական բացահանքի մակերեսներում: Ուսումնասիրվող տարածքում մակաբացման ապարները ներկայացված են ժամանակակից առաջացումներով, որոնց վերին մասը ներկայացված է թույլ հզորությամբ հողաբուսական շերտով ու դեյուվիալ նստվածքներով՝ ներկայացված հողա-ավազակավային շերտով, թույլ կապակցված փոխր-բեկորային ավազախճային, խճաբեկորային առաջացումներով:

Հորատման հարթակների կառուցման և փորձնական բացահանքի անցման ժամանակ նախատեսվում հանել մակաբացման ապարներով հողային շերտը /որը հանդիսանում է 0.7մ հզորությամբ փոխր-բեկորային ավազախճային, խճաբեկորային առաջացումներ/, կուտակել այն անմիջապես փորվածքի և հարթակի հարևանությամբ, աշխատանքների ավարտից հետո այն օգտագործել խախտված լանդշաֆտի վերականգնման նպատակով:



Երևակման տարածքում ծրագրավորվող երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ժամանակ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարել մոտակա սպասարկման կետերում կամ կայաններում, ինչը կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում,
- ընդերքօգտագործման թափոնների կառավարում,
- արտանետվող վնասակար նյութերի քանակը նվազեցնելու նպատակով սարքավորումների վրա արտանետվող նյութերի չեզոքացուցիչների՝ կատալիտիկ ֆիլտրերի տեղադրում:
- փոշենստեցման նպատակով ջրցանի իրականացում՝ տեղամասին մոտեցնող ճանապարհի երկայնքով, հորատման տարածքների, փորձնական բացահանքի անցման տարածքներում,
- խախտված տարածքների վերականգնում, ինչի նպատակով նախատեսվում է հորատման հրապարակների և փորձնական բացահանքի անցման տարածքներում հողի շերտը հանել, կուտակել անմիջապես փորվածքների հարևանությամբ, հետախուզական աշխատանքների ավարտից հետո օգտագործելով ռեկուլտիվացիոն աշխատանքներում,
- ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժի բացառում:

Կոտայքի մարզի Մայակովսկու բազալտների հանքերևակման «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ» տեղամասի երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «ԱՌՄԱ ՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- աշխատանքների ընթացքում երևակման տարածքում և ճանապարհի հարակից տարածքում մթնոլորտային օդում փոշու և ծխագազերի մոնիթորինգ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
- երևակման տարածքում հողերի աղտոտվածության մշտադիտարկում,
- տարածքին բնորոշ վայրի բնության տեսակների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության դիտարկում (դիտարկումը կատարվելու է երևակման և հարակից տարածքներում),
- ուսումնասիրվող տարածից 0.4 կմ հեռավորության վրա գտնվող անձրևաջրերից առաջացող արհեստական լճակի /որն առաջանում է գարնանային անձրևաջրերից/ մշտադիտարկում,



-աղմուկի մակարդակի չափում հարակից արտադրական տարածքի /շահագործվող հանքավայրերի տարածքներ/ ուղղությամբ:

Կոտայքի մարզի Մայակովսկու բազալտների հանքերևակման «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ» տեղամասում «ԱՌՄԱ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից կատարվելիք շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար նախատեսված է տարեկան 350.0 հազ. ՀՀ դրամ

Պատճառաբանական մաս. Փորձաքննության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Կոտայքի մարզպետի աշխատակազմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

-Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

-Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

-Ապահովել խախտված տարածքների **ռեկուլտիվացիայի** աշխատանքների իրականացումը:



-Առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջներով:

-Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին:

-Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՌՄԱ ՍԹՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Մայակովսկու հանքավայրի «Հյուսիսային» տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Լեւոնակ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Աննա Սարգսյան